

---

---

Միրիացի արար ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին (թարգմանությունը արաբերեն բնագրից, առաջաբանը, ներածությունը և ծանոթագրությունները Արշակ Փոլադյանի և Լևոն Սարգսյանի), Դամասկոս, Դար ալ-Շարկ հրատ., 2017, 264 էջ:

“Միրիացի արար ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին” աշխատության



արաբերեն բնագրից թարգմանության, առաջաբանի և ծանոթագրության հեղինակներն են արաբագետ-պատմաբաններ՝ Միրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, պ. գ. դ., պրոֆ. Արշակ Փոլադյանը և ՀՀ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան, պ. գ. դ.,

պրոֆ. Լևոն Սարգսյանը: Գրքում, որը, ի դեպ, Դամասկոսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայերեն լեզվով հրատարակված առաջին հրատարակությունն է, տեղ են գտել նաև թեմային առնչվող արաբերեն բնագրերը, ինչը շահեկան է դարձնում աշխատանքն արաբերեն ընթերցողի համար: Բացի այդ, առաջին անգամ արաբերեն բնագրերից արևելահայերենի են թարգմանվել և գիտական շրջանառության մեջ դրվել հայերի մասին Շեյխ Ֆայեզ Ալ-Ղուսեյնի բոլոր հուշագրություններն ու գրառումները, որոնք հիմնականում ամփոփված են հեղինակի “Ջարդերը Հայաստանում” և “Իմ հուշերը արաբական հեղափոխության մասին” աշխատություններում:

Շեյխ Ֆայեզ Ալ-Ղուսեյնը (1883–1968) սիրիացի փաստաբան է, հայկական ջարդերի ականատես: Ծնվել է Միրիայի Հաուրան նահանգում: Եղել է բեդվինական Սալլութ ցեղի առաջնորդի որդին: Կ. Պոլսում կրթությունն ավարտելուց հետո երեքուկես տարի աշխատել է որպես Մամուրեթ ալ-Ազիզ (Խարբերդ) վիլայեթի Քյախթայի գավառապետ (կայմակամ): Դամասկոս տեղափոխվելուց եղել է Ազգային խորհրդի (խորհրդարան) անդամ: 1915 թ. հուլիսին ձերբակալվել է հակաթուրքական քարոզչության մեղադրանքով (ըստ ամենայնի անդամակցել է “Արաբական երիտասարդական ընկերությանը”՝ “Ալ-Ֆաթաթին”) և աքսորվել Էրզրում: 1915 թ. օգոստոսից 1916 թ. փետրվար պահվել է Դիարբեքիրում, որտե-

դից դիմել է փախուստի: Մեծ դժվարություններով հասել է Դեյր Ջոր, ապա՝ Բասրա, հետո՝ Հնդկաստան: Հենց այդ դեգերումների ընթացքում Ֆայեզ Ալ-Ղուսեյնը հանդիպել է հայ գաղթականների, ծանոթացել նրանց անօգնական ու ողբերգական վիճակին, հայերի թեմայով զրուցել բազմաթիվ օսմանյան պաշտոնյաների, բարձրաստիճան գինվորականների, ինչպես նաև՝ անվանի մարդկանց հետ: Հայերի ողբերգությունը ցնցել է Ֆայեզ Ալ-Ղուսեյնին, ում համար անհասկանալի է թվացել նրանց հետ պատահածի պատճառը:

Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը, մասնավորապես՝ «Ջարդերը Հայաստանում» գիրքը, որն առավել ծանոթ է գիտական հանրությանը, տասնամյակներ շարունակ ծառայել է որպես կարևոր սկզբնաղբյուր Հայոց ցեղասպանության հետազոտության ոլորտում, ինչպես նաև՝ արևելագիտական ու պատմագիտական ուսումնասիրություններում: «Ջարդերը Հայաստանում» գիրքը, որը, ի դեպ, թարգմանվել է մի շարք լեզուներով, այդ թվում՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, ռուսերեն, պարսկերեն, անդրադառնում է հիմնականում Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության մեջ, հայերի ջարդերին ու տեղահանություններին: Սա նրանց մասին արար մտավորականի վկայություններն են, որոնք, ինչպես ինքն է ասում, տեսել ու լսել է ամենահավաստի աղբյուրներից: «Ջարդերը Հայաստանում» աշխատանքը, որը հեղինակն ավարտին է հասցրել Բոսթոնում, 1916 թ. սեպտեմբերին առաջին անգամ հրատարակման է ներկայացվել Կահիրեում, տպագրվել 1916 թ. դեկտեմբերին կամ 1917 թ. սկզբներին, որից անմիջապես հետո կատարվել են ֆրանսերեն ու անգլերեն թարգմանությունները: 1920-ականներից գիրքն ունեցել է արևմտահայերեն մի շարք թարգմանություններ՝ հիմնականում եվրոպական լեզուներից: Ինչ վերաբերում է «Իմ հուշերը արաբական հեղափոխության մասին» աշխատությանը, որը կարևոր նշանակություն ունի Օսմանյան կայսրության արաբական երկրամասերում հակաթուրքական տրամադրությունների և արաբական ազգային շարժման ուսումնասիրման առումով, ապա դրանում հայերի մասին տվյալները շատ դեպքերում դուրս են մնացել ոլորտի մասնագետների ուշադրությունից: Սույն հատորը, որում կցված են նաև Ալ-Ղուսեյնի աշխատությունների արաբերեն բնագրերը, մասնավորապես՝ 1991 թ. Հայկում տպված «Ջարդերը Հայաստանում» գիրքը, ինչպես նաև հատվածներ 1956 թ. Դամասկոսում լույս տեսած «Իմ հուշերը արաբական հեղափոխության մասին» գրքի առաջին հատորից, լրացնում է այդ բացը:

Նշենք, որ արաբական պատմագիտական միտքը բազմիցս անդրադարձել է Օսմանյան կայսրության մեջ հայերի կոտորածներին: Ֆայեզ Ալ-Ղուսեյնի աշխատանքը, մաս կազմելով գիտական այդ խոսույթին, առավել արժեքավոր է իր աղբյուրագիտական նշանակությամբ: Բացի վկայություններից, մուսուլման արաբ հեղինակը կոշտ քննադատության է ենթարկում իթթիհադականներին՝ հայերի նկատմամբ կիրառած անմարդկային դաժանությունների համար: Հետաքրքրական է, որ Ալ-Ղուսեյնն ամեն կերպ ձգտում է ցույց տալ, որ իսլամը որևէ դեր չուներ և չէր կարող ունենալ հայկական ջարդերի կազմակերպման ու իրագործման հարցում, ինչն արաբական իսլամական հասարակության ներսից հնչող կարևոր դիտարկում է:

Հարկ է նկատի ունենալ, որ Հայոց ցեղասպանության մասին, մասնավորապես, սիրիական աղբյուրների ուսումնասիրությունն արժեքավոր է Օսմանյան կայսրության ներքին քաղաքականությունը և Հայոց ցեղասպանությունը նոր լույսի ներքո ուսումնասիրելու տեսանկյունից, եթե նկատի ունենանք նաև մազապուրծ եղած հայ գաղթականների հայտնվելը սիրիական անապատներում ու սիրիացիների անմիջական բախումը հայերի ողբերգության հետ: Այս իմաստով, «Միրիացի արաբականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին» աշխատությունը կարևոր ներդրում է հայ արևելագիտության, ինչպես նաև՝ ցեղասպանագիտության ոլորտում: Գիրքն ունի թե՛ գիտական և թե՛ քաղաքական կարևոր նշանակություն: Այն կարող է նպաստել նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Բացի այդ, աշխատանքը կարևոր է հայ-արաբական պատմական փոխառնչությունների վերհանման, ինչպես նաև արդի փուլում հայ-արաբական համագործակցության ամրապնդման հարցում:

Նշենք, որ գրքի արաբերեն բաժնում տեղ է գտել նաև սիրիացի անվանի մտավորական, Միրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական Ժողովի պատգամավոր, Հայաստանի Հանրապետության նախագահի «Երախտագիտության» մեդալակիր դոկտոր Նաբիլ Տոմեի առաջաբանը, ով բարձր է գնահատել Ա. Փոլադյանի և Լ. Սարգսյանի աշխատանքը՝ այն համարելով մեծ ներդրում Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության ոլորտում:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ